

Կու դան Ծնունդի, Ամանորի, Յայտնութեան տօները, կրօնապէս խստապահ ու ժամանակը քաջքնել ուղող պաշտօնեաներու համար՝ նորանոր պատրուակներ, ուշացնելու համար՝ դրամին պատրաստութիւնն ու յանձնումը: Միայն նոր տարուան փետր. 14-ին պատրաստ կ'ըլլայ վերջնականապէս «Abfertigung» (բաւարար կերպով) դրամը, արդէն իսկ հինգ շաբաթէ ի վեր Հունգարացի Կոմս անուանուած Պետրոս Ապետիքի...:

Ուրեմն նա ճամբու պատրաստ է արդէն: Ոչ այնքան Բրիտանացիական կորովով, ինչպէս հեռուոր Արեւելքի առաջին ճամբորդութեան շրջանին, բայց փորձառու դիւանագէտի կարեւոր գիտութեամբ հարստացած: Նկատած թէ այս անգամ Լեհ թագաւորն ալ հետաքրքրուած է Ապետիքի առաքելութեամբ, ճամբուն ուղեգիրը դարձեալ Լեհաստանէն ու Ռուսաստանէն կ'անցնի: Վարչաւիա (որ Խարքովի գուղընթաց միշտ աւելի կարեւոր կը դառնար), Հոմ ու Վիեննա՝ միշտ աւելի սերտ համագործակցութեան կը դիմեն: Լեհաստանի նուիրակ Փալաւիչին, Ս. Աթոռի քով՝ Չեպոյ ծիրանաւորը, Սոպիէսքի, իսկ Վիեննայի մէջ՝ Պոլոնովիչի, շարունակաբար ճեպընթաց սուրհանդակներով կը թղթակցին իրարու հետ: Հաւթրքական պատերազմի շարժիչ հոգին Վատիկանի մէջ է, ուսկից ամէն կողմ տարածուող դիւանագիտութիւնը կը ցած էր վերջապէս միացնել ու մէկ նպատակի լծել Միջին Եւրոպայի պետութիւնները: Կոմս Պետրոս Ապետիքն ալ կրնար օրէ օր խորհրդակցիլ իտալացի նուիրակներուն հետ, լեհ դիւանագէտներուն հետ, եւ շատ հաւանաբար ստէպ մտած ելած ըլլալու է նաեւ արքունիքը Սոպիէսքի՝ որ, ինչպէս

տեսանք, այս հակաթրքական դործին գլխաւոր մղիչներէն մէկն էր: Ապետիք արդէն քանի մը անգամ եղած էր Լեհաստան, այսպէս՝ Չենսթրիտովա, Վարչաւիա, Խարքով, որոնց մասին հաստատ տուեալներ ունինք: Հետեւաբար Երբ 1684-ի ձմրան վերջերը՝ Լեհաստանէն անցնելով Պարսկաստան երթալու ճամբորդութեան վերջին պատրաստութիւնները կը տեսնէր, իր լաւ ծանօթներու ձեռքով դիւրաւ կրնար գտնել՝ Վիեննայէն ընդունած դրամով՝ հարկ եղած դիւանագէտները, զէնքերն ու զանազան Բրիտանացի դրամները, զոր դուրուն համաձայն բաւական դարգացած վաճառականութեան շնորհիւ կրնար գտնել: Կրնար այժմ ընտրել իր ճամբու ընկերները, նկատի ունենալով ճամբորդութեան դժուար պարագաները: Նա պէտք ունէր խելացի, լեզուագէտ ու միաժամանակ տոկուն առողջութեամբ օժտուած մարդոց, որոնք հարկ եղած պարագային՝ զէնքն ալ կարենային լաւ գործածել: Կ'արժէ հոս յիշել թէ Ապետիքի ճամբորդութենէն արդէն դար մը առաջ ալ շատ բընական պահանջ մը դարձած էր Եւրոպացի դեսպաններուն համար՝ հաւաքել իրենց ուղեւորութեան նկատմամբ ճամբորդական նկարագրութիւններ Վիեննայի, Փրակայի եւ Լեհաստանի դրամադառանցներէն:

Եւ ահա, լոյսը կը սկսի նսեմանալ: Ապետիքի կեանքը դարձեալ կը սուղուի ԺԶ. դարու վերջաւորութեան՝ Լեհ-ռուսական ճիւնապատ անձայր դաշտագետիներու կապտաթոյր մշուշին մէջ...:

Հունգարեիքէն Բարգմանեց

Հ. ԱՆԴՐԵԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

(Շարունակելի)

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

(Շար. Բազմ. 1955. Թիւ 8-10, էջ 177)

ՄԱՍՆ Գ.

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

1. — Ս. Ղազարու դիւանին մէջ ունինք երկու փոքր տետրակներ, ուր հաւաքուած են լրագիրներէ, Հ. Յակ. Իսապետեանցի կողմէ, քանի մը նորեկուկ Լուսինեաններու մասին — մեր ցարդ տեսածներէն զատ — վիճաբանութիւններ՝ գաղղերէն լեզուով, որոնց մէջ կեդրոնացած են անոնց ծագման կամ վաւերականութեան տարբերը, եւ զորս պիտի օգտագործենք նաեւ մենք:

Զմիւռնիոյ մէջ կը բնակէր՝ կէս դարէ ի վեր՝ Գաղղիացի ընտանիք մը նոյն այն մականունով, որու նկատմամբ «Սթամպուլ»-ի մէջ (1878, Օգոստ. 26) տեղեկութիւն կը տրուէր, յիշելով Պետրոս՝ շառաւիղ Կիպրոսի Լուսինեաններուն, եւ հայր՝ հինգ զաւակներու, որոնցմէ մէկը կը տեղեկագրէր նոյն լրագրին, բողոքելով իր մէկ հօրեղոր՝ Անտոն Ռուի դէմ, որ իրենց մականունը շորթած էր, եւ որուն որդեգրութիւնն ալ կը հերքէր՝ ինքզինքն յայտարարելով «միակ երեւցուցիչ» նոյն տոհմին:

Ուրիշ տեղեկագրութիւն մը, «Ժուռնալ տը Ժընեւ»-ի (1878, Սեպտ. 1) մէջ, կը վկայէր՝ թէ Գաղղիոյ կառավարութիւնը 1735ին քննութիւն մը կատարած էր, ու հաստատած յիշեալ Պետրոսի տոհմին ծագումը Կիպրոսի Լուսինեաններէն:

Զեմ մտներ անոր մանրամասնութեանց մէջ, քանի որ հայ Լուսինեաններու հետ անուղղակի կապ մը ունին լոկ, եւ մեղ չեն հետաքրքրեր:

2. — Լուսինեաններ իտալիոյ մէջ, Լուսինեաններ Զմիւռնիոյ մէջ, փափաք

արթնցուցին Գալֆայեան եղբայրներու սրտին մէջ՝ Լուսինեան ընտանիք մըն ալ կերտելու Կոստանդնուպոլսոյ մէջ: Անոնցմէ երկուքը, Ամբրոսիոս ու Խորէն, նախկին Միթիթարեաններ, մէկը կարգաթող, միւսը՝ նկրտող եկեղեցական բարձր աստիճաններու, ուղեցին զարգարուիլ նաեւ այդ թագաւորական հին մականունով: Եւ ահա օր մը Ներսէս Վարժապետեան Պատրիարքը վճռեց իր հետեւալ գեկոյցը.

Պէշիկթաշ, 13 Հոկտ. 1879

Ամենապատիւ Պարք. Սրբազան Հայր
Նախագահ Աղղ. Կեդր. Վարչութեան
Խառն Ժողովոյ

Բարձրապատիւ իշխան Լուի, որ տոհմային վաւերագիրներու զօրութեամբ ընդունուած է ի կայսերական կառավարութենէ անտի Ռուսիոյ (ուր կը բնակի ի 1829է հետէ), իբրեւ սերունդ յուղիղ զծէ Լուսինեան թագաւորացն Կիպրոսի, Երուսաղէմի եւ Հայաստանի, պատիւ ունեցաւ իւր պաշտօնագրով որ ի 19 Հոկտ. 1878, Ամենապատիւ Բարձրաշնորհ Սրբաղնութեան Զերում յայտարարել՝ թէ ես եւ եղբարքն իմ սերեալ եմք ի հօրեղորէն նորա յԱմօրի-Յովսէփ Նար պէյ իշխանէն Լուսինեան, եւ թէ հետեւաբար ինքն կը համարուի մեծ հօրեղորայր մեր:

Նորուն Արքայական Բարձրութիւնը՝ իբրեւ արդի գլուխ մեր ազգատոհմին, կը պահանջէ՝ որ եւ ես ստանձնեմ իմ գերդաստանին բնիկ եւ պատմական Լուսինեան անունը, զոր ինքը եւ եղբարքս կը կրեն: Արդ, ըստ որում միեւնոյն ազգատոհմին անդամոց կարելի չէ այլ եւ այլ մականուն գործածել, եւ ըստ որում իմ

եւս անբռնաբարելի իրաւունքս է իմ հար-
ցըս ժառանգութիւն թողած մականունն ի
կիր առնուլ, հետեւաբար եւ ես կը ստիպ-
ուիմ Լուսինեան հայրենի անունս ստանձ-
նել այսուհետեւ:

Պատիւ ունիմ զայս որոշումն հաղորդել
Ամեն. Տէրութեանդ ի դիտութիւն, մնա-
լով

Ն. Ծ. ի Քրիստոս

Խորէն Արքեպս. Նար Պէյ Լուսինեան(1)

Նոյն ամսուան 31ին, Պատրիարքարանը
յայտարարութիւն մը կը հանէր Խորէնի
համբաւեալ ճանապարհորդութեան մա-
սին, ուր՝ ի միջի այլոց՝ կը գրուէր.

«Իսկ Լուսինեան տիտղոսի դործածու-
թեան զալով, Գեր. Խորէն Եպս. թէեւ
ուղեւորութենէն առաջ ծանուցած է Աղղ.
Պատրիարքարանի՝ թէ այսուհետեւ սոյն
մականունը պիտի դործածէ, սակայն Աղղ.
Պատրիարքարանը չունենալով պատեհ ա-
ռիթ՝ քննելու եւ ստուգելու այն վաւե-
րական վկայագրին՝ որ Գեր. Խորէն Եպս.
պէտք է ունեցած ըլլայ ի ձեռին, Նար Պէյ
մականունը այսպէս իշխանական խափան-
եալ տոհմի մը յատուկ Լուսինեան մական-
ունան փոխակերպել ուղեւոր համար, Պա-
տրիարքարանս չկրնար ընդունիլ նոյն յոր-
ջորջման փոփոխութիւնը, մինչեւ որ Նո-
րին Գերապատուութիւնը չհաղորդէ Պա-
տրիարքարանիս իւր ազգատոհմին սերուն-
դեան վաւերական ապացոյցները: ... Եւ
հարկ կը համարի հրատարակել՝ որ իրեն
համար Գեր. Խորէն Սրբազանի ամէնէն
վեհ ու վսեմ տիտղոսն իւր եպիսկոպոսա-
կան բարձր աստիճանն է, որ բաւական է
զինք ամէնուն յարգանաց արժանի ընել,
եւ անունը փայլեցնել ի միջի քաղաքա-
կրթեալ ազգաց»(2):

Ասկէ յայտնի է որ Պատրիարքարանն
ալ համոզուած չէր այդ փոփոխումին
հիմնաւորութեան:

3. — Երեք ամիս վերջ, Չմիւռնիոյ մէջ
լոյս տեսաւ ընդարձակ յօդուած մը(3),

արտատպուած «Սթամպուլ»էն, որ կը խո-
սէր Գալֆայեաններու պահանջի մասին,
եւ կը յիշատակէր մեր թուած երկու վա-
ւերագիրները՝ զաղղիւրէն թարգմանու-
թեամբ, Պոլսոյ թերթին նպատակ նշանա-
կելով «ծանուցանել խաբէութիւնը հայ
տան մը, որ կը փորձէ սեպհականել այս
(Լուսինեան) պատմական անունը, որ
յատուկ էր Չմիւռնիոյ համանուն ընտա-
նեաց:

Իսկ «Սթամպուլ» կը դրէր՝ թէ 1878ին,
անդլեւթուրք դաշնաւորութենէն յետոյ,
ինք (լրագիրը) զեկուցած էր՝ որ Կիպրոսի
արքայական տոհմին միակ մնացորդն էր
Չմիւռնիոյ ճիւղը, ճանչցուած նաեւ Գաղ-
ղիայէն: Այս ձեռնարկն ըրած է անոր հա-
մար, որովհետեւ Հիւսիսային Գերմանիոյ
լրագիրը(4) նոյն պահուն տեղեկացած էր՝
թէ Պետրպուրկի մէջ կար «չքաւոր մը,
կասկածելի խելագար, որ կը պնդէր՝ թէ
ինք Լուսինեան մ'է», ակնարկելով Խորա-
սանի մեր աքսորական իշխանին(5): Եւ
զարձեալ զաղղիւրէն «Լը Թան» կ'իմացնէր
թէ «Քանթարօղլու Նար Պէյ երեք եղբայր-
ներ յայտարարած էին՝ թէ իրենք եւս
Լուսինեան իշխաններ էին»:

Յօդուածագիրը կը յարէր. «Մեր դիտ-
ցածով՝ հոս ոչ ոք կայ, որ լրջօրէն առնէ
այս սամաթիացի Հայերուն պահանջը: ...
Եւ համոզուած ենք՝ թէ ի հեճուկս այն
բոլոր նեղութեան, զոր անոնցմէ երկուքը՝
Յովսէփ եւ Ամբրոսիոս՝ կը կրեն տարիէ
մը ի վեր Փարիզի մէջ, ուր հաստատուած
են՝ քիչ մը իրենց մասին խօսիլ տալու
համար, ոչ ոք հրապուրուած է իշխանե-
րու եւ թեկնածուներու այն դերով՝ զոր
խաղալ կ'ուզեն Գաղղիոյ մէջ Քանթարօղ-
լու Գէորգին այս որդիները, որոնք մերթ

(1) Մասիս լրագիր, 1879, հոկտ. 16-28:

(2) Անդ, 1879, նոյ. 2-14:

(3) L'Impartial, Journal de Smyrne, 1880,
փետր. 18.

(4) Gazette de l'Allemagne du Nord.

(5) Ներկայ գրութեան մէջ, Մասն Ա.

իրեւ փոխանակիչ դերձակներ կամ հան-
դերձի վաճառականներ, մերթ իրեւ տը-
պաղրիչներ կամ կատակերգակներ եւ իշ-
խաններ, իրենց կեանքը կ'անցընեն կոչ-
ուելու Գալֆայեան, Նար Պէյ կամ Լու-
սինեան՝ ըստ իրենց շահուն կամ հաճոյք-
ներուն »:

4. — Յօդուածագիրը կը շարունակէր
իր հերքումը, նկատելով որ ոչ մէկ ապա-
ցոյց չկայ՝ թէ իշխան Լուսի կամ Ամօրի
Նար պէյ կոչուած անձերը Լուսինեաններ
ըլլային, եւ ոչ ալ նշան՝ Գալֆայեաննե-
րու աջակցութեան ատենց հետ, որոնց
ինքնութիւնն ալ արդէն անյայտ է: Եթէ
փաստեր ունէին ի նպաստ այդ նոր մա-
կանունին, ինչո՞ւ չկրցան ներկայացնել
բարձրագոյն իշխանութեան՝ երբ պահան-
ջեց իրենցմէ:

Կը յարէր՝ թէ Պետրպուրկի Լուսի Լու-
սինեանը աղերսադիր մը կը յանձնէ տեղ-
ւոյն թուրք զինուորին՝ Բարձրագոյն Դը-
րան մատուցանելի, ուր ինքզինք կը յայ-
տարարէ որդի Քրիստոսութեան Լուսինեան
անունով Կիպրացիի մը, որ ըստ իր կտա-
կին՝ 1818ին կը փախչի իր կղզիէն ու
կ'անցնի Ռուսաստան. աղղով ու լեզուով
յոյն, որով կը շարադրէ կտակն ալ, ուր
կը գեկուցանէ՝ թէ ապրեր ու մեռեր է յոյն
օրթոտոքս եկեղեցւոյ ծոցին մէջ, որ «իր
հայրերուն» կրօնքն էր: Ո՞րքան հեռի
զաղղիացի կաթողիկէ Լուսինեաններէն:

Քրիստոսութեան կը խօսի Կիպրոսէն իր
փոխադրած ամբաւ գանձերու մասին, ու-
րոնք սեպհական էին Լուսինեաններուն, եւ
զորս իբր թէ թուրք պետութիւնը գրաւե-
ր է. ինչ որ կը քննէ եւ կը հերքէ յօդուա-
ծագիրը:

Իսկ Լուսի կը պահանջէր գանձին կէսը,
ինդրագրին մէջ ակնարկելով նաեւ « իր
երեւելի եղբորորդիներուն, իշխան Լուսի
Լուսինեանի (Յովսէփ), իշխան Գուրգոն
Լուսինեանի (Ամբրոսիոս), եւ Պէշիկթաշի
սրբազնագոյն արքեպիսկոպոսին՝ Գեր.
Խորէնի, Լուսինեան իշխանի, որ կը փա-

փաքի ճանչցուիլ Դունէն»: Եւ կը հարցնէ
յօդուածագիրը. Գալֆայեանները, «դտա-
րիւն հայեր», ի՞նչպէս կրնան յոյն օրթո-
տոքս եղբոր թոռները ըլլալ:

Ասոնք են լրագրին արդար տեսութիւն-
ները:

5. — Քանի մը դիտողութիւն ալ մեր
կողմէ: Որպէսզի Գալֆայեան եղբայրները
սերած ըլլային Պետրպուրկի Լուսի իշխա-
նին «հօրեղբորմէն»՝ Ամօրի Յովսէփէն,
ինչպէս կը դրէր Խորէն, հարկ էր որ ի-
րենց հայրը անոր որդին ըլլար, եւ աս-
տիճանակից՝ այսինքն հօրեղբորորդի՝
Լուսի իշխանին, որ 1829էն ի վեր հաստատ-
ուած էր Ռուսիա. ծեր էր արդէն, եւ այս
իմաստով իսկ Խորէն զայն կրնար կոչել
«մեծ հօրեղբայր մեր»:

Արդ կը հարցնեմ. եթէ այդ հօրեղբոր
հայրը՝ Քրիստոսութեան՝ Կրէստէն անցաւ
Ռուսաստան, անոր եղբայրը՝ Ամօրի՝
ո՞ւր դնաց հաստատուեցաւ: Անշուշտ Կոս-
տանդնուպոլիս, ուր կը շարունակէին ապ-
րիլ իր որդին ու թոռները՝ Գալֆայեան-
ները: Արդ, ի՞նչպէս կ'ըլլայ որ ատենց
հայրը՝ Գէորգ՝ իւր արքայադուռն եւ Լու-
սինեան հօր մասին բնաւ չէ խօսած իր
զաւակներուն, որոնք իրենց փառաւոր
ծագումը անոր կարծեալ հօրեղբորորդիէն
կ'իմանան: Այդ ո՞րքան խոնարհ մարդ էր
այդ Քանթարօղլուն, մոռնալու համար
հայր, զարմ, ազգանուն, պատիւ, ամէն
ինչ. ճիշտ հակառակ իր որդիներուն:

Ու դարձեալ, իր կրած մականունը մի-
թէ իրեն չի՞ ընծայեր Քանթարեան կոչ-
ուած հայր մը:

Իրենց պապը՝ Քրիստոսութեան եղբոր
պէս՝ ազգով յոյն, ինչպէս բնական է
խորհիլ, Պոլիս գալով՝ աւելի յօժարու-
թեամբ ու դիւրաւ պիտի խառնուէր իր
ազգին՝ քան հայ ժողովուրդին մէջ: Արդ
ի՞նչպէս կ'ըլլայ որ իր որդին ու թոռները
անունով, չունէով ու լեզուով հայ են
դարձեր յունական այդ կեդրոնին մէջ,
մինչեւ 1879 չլիջելով իրենց օտար ծա-

գուման անգամ: Եւ եթէ այդ ծագումը այն-
չափ թանկագին եղաւ յետոյ իրենց, ի՞նչ-
պէս կրնար արհամարհուիլ նախապէս:

Նոյն պապը վը կոչուի թորէնէն «Նար
Պէյ Լուսինեան»: Հարցնենք նախ. Լու-
սինեան մը ի՞նչպէս առած էր «Նար Պէյ»
թրքատիպ անունը: Եւ երկրորդ. Գէոր-
գին որդիները «Գալֆայեան» կոչուած ի
պատանեկութենէ, յետոյ փոխեցին դայն
եւ ըրին «Նար Պէյ», եւ շատ կանուխ քան
իրենց «մեծ հօրեղբոր» յայտնուիլը: Կա-
րելի չէ՝ եւ ոչ ըսել՝ թէ իրենց դեռ ան-
ծանօթ աղջականէն ուսան. ապա թէ ոչ՝
ատոր հետ միասին պիտի առնէին մեծա-
գոյն նախանձախնդրութեամբ «Լուսին-
եան» ալ, այսինքն՝ ամբողջ մականունը,
ոչ թէ կէսը միայն:

Ի՞նչ եղբակացութիւն կարելի է հանել
այս ամէնէն: Ահաւասիկ: «Ամօրի-Յով-
սէփ Նար Պէյ իշխան Լուսինեան» անդոյ
եւ նորաստեղծ անձ մըն էր: Քրիստոսու-
լոսի կտակը, հաւանօրէն նաեւ կտակա-
րար՝ կեղծիք մը: Անոր որդին Լուի՝
բախտախնդիր մըն էր, որուն հետ միա-
բանեցան թորէնի եղբայրները, որ միասին
իրենց վրայ զգեցան՝ մէկը իր կեղծ հօր,
միւսները իրենց կեղծ պապուն «Լուսին-
եան» անդոյ մականունը, փոխարէն տա-
լով պապուն՝ իրենց «Նար Պէյ»ը, որպէս-
զի կապը աւելի զօրացնեն:

Այս է տրամաբանական միակ մեկնու-
թիւնը այս խնդրին մէջ:

Արդէն Գալֆայեան եղբայրներու ամ-
բողջ կեանքը կատակերգութիւն մը եղաւ
բազմաբար. աշխարհէն վանք, քահանա-
յական աստիճան, վանքէն աշխարհ,
կարգընկեցութիւն, ամուսնութիւն, արք-
եպիսկոպոսութիւն, Քանթարօղլու, Գալ-
ֆայեան, Նար Պէյ, Լուսինեան:

Գետնաօդիւն անգամ ասոնց քով պար-
տութիւն պիտի խոստովանէր:

6. — «Սթամպուլ» 1881ի Մարտ 28-ին,
կ'իմացնէր՝ թէ Չմիւռնիոյ Լուսինեաննե-
րու մրցակիցը՝ Անտոն Ռու, զոր տեսանք

վերեւ, լսելով որ Պոլսոյ Հայոց Պատրի-
արքարանը որոշեր է միջնորդել Գալֆա-
յեաններու խնդրին լուծման, եւ խորհելով
որ կրնայ ի նպաստ անոնց վերջանալ, կը
կանխէ բողոքել նոյն լրագրին մէջ, դրե-
լով այսպէս. «Յեցած վաւերական ու դա-
րաւոր պաշտօնադիրներու վրայ՝ զոր ու-
նիմ ձեռքիս մէջ, յայտնապէս կը բողոքեմ
ոեւէ անձի դէմ՝ որ ուղէ կրել անուն ու
տիրոջ մը, որ կը պատկանի միայն ինծի,
որ օրինաւոր ժառանգն եմ մահէն վերջ իմ
հանդուցեալ հօր՝ Կարոլոս Սիմոն Կղեմէս
Ռու Լուսինեան իշխանի»:

Տարապալմա՞ն երկիւղ. բայց բախտա-
խնդիրներու սովորական իրերամարտ
պայքարն էր՝ զոր կը մղէր այդ Ռուն:

Այսպէս Լուսինեան աղջանունին ձրդ-
տումը՝ այդ շրջանին դարձած էր համա-
ճարակ հիւանդութիւն մը, որով վարակ-
ուած էին եւ իրարու հետ կը մրցէին հայեր
եւ օտարներ:

Նախ, եւ ի վաղուց, Լուլի ընտանիքը
Իտալիոյ մէջ. ապա Լեոն թորասանցի՝
Ռուսիոյ մէջ. ապա Չմիւռնիոյ տունը.
անոր հակառակորդը՝ Անտոն Ռու. Քրիս-
տոսուլոսի որդին՝ Լուի՝ Պետրպուրկի
մէջ. Գալֆայեանները՝ Փարիզ ու Պոլիս.
ասոնք ինծի ծանօթները:

Ամէնքն ալ կը բողոքէին իրարու դէմ,
իրարմէ կը յափշտակէին Լուսինեան տիտ-
ղոսը, կամ իրարու կը շնորհէին դայն դիւ-
րագին:

Այդ բոլոր ինքնակոչները մեկնեցան աշ-
խարհէս. եւ մնաց Լուլի ընտանիքը միայն,
որոնց մտքէն ալ յաջողեցայ հանել Լու-
սինեան ծագումի երազանքը:

Այսուհետեւ կրնան հանդիստ ննջել Կի-
լիկիոյ եւ Կիպրոսի գաղղիազարմ դահա-
կաներու աճիւնները՝ իրենց անկապտելի
իրաւունքներուն մէջ, յուսալով որ նոր
թեկնածունքը չբուսնին ու չկանգնին իրենց
դէմ:

Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Վերջ

ՀԱՄԱՌՕՏ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱԲԿԵՐԻ ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՆՈՐ ԲԱՐՔԵՐՈՒՆ, ԲԱՐՔԱՌԻՆ ՈՒ ԱՌԱԾՆԵՐՈՒՆ

(Շար. տես՝ Բազմ. 1953, Թ. 8-10, էջ 182)

ԳԼՈՒԽ Բ.

ԱՐԱԲԿԵՐՅԻՒՆ ԶԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍԸ

ՈՍՏԱՅՆԱՆԿՈՒԹԻՒՆ

Արաբկիրցիին գլխաւոր ճարտարա-
ուեստն է 75% ոստայնանկութիւն կամ
մանուսագործութիւն՝ միջին եւ աղքատ
ընտանիքներու համար, որոնք հարուստ
ոստայնանկներու հաշուին կը գործեն որոշ
վճարումի մը փոխարէն եւ իրենց համաստ
ապրուստը կը ճարեն: Հոր կը գործեն,
ագր կը հիւսեն եւ կ'ագրեն, առէր կը փաթ-
թեն ընկոյգէ մեծ դերտէկներու (դատարի
եղէր) վրայ, մասուրա կը լեցնեն ընկու-
ղենի բարակ խողովակաձեւ ճիւղերու
վրայ, երկուքն ալ ջէհէր կոչուած փաթ-
թով գործիքով. մեծը՝ հէմֆ հիմնու, խսկ
մանրերով մաքուրով մանուս գործելու
համար: Մանուսան երկայն, քառակուսի
գիծերով եւ գոյնգոյն կ'ըլլայ, ըստ ճա-
շակի եւ սովորութեան. հետզհետէ ծաղ-
կեայ մանուսայի հորքը ալ հնարեցին, նը-
մանութեամբ եւրոպականին: Հաստա-
տուն, բամպակէ լաթեղէն մ'է որ կը գոր-
ծածուի այր մարդոց եւ տղոց էմքարի շի-
նելու համար, խսկ կանանց եւ աղջիկնե-
րուն երկայն ֆիստանի համար, զոր եր-
կար ժամանակ կը հաղուին, մինչեւ որ
հար ժամանակ կը շինեն: Մանուսայի վա-
հինայ եւ նորը շինեն: Մանուսայի վա-
հառականութիւնը տարածուած է մեծա-
ւոր մեծ քաղաքներու եւ գիւղերու մէջ:
Հորի մանրամասն գործիքները կաղ-
յատուկ անուններն ունին. ամբողջ կաղ-
մածը կը կոչուի հոր, խսկ մասերը՝ տու-

փա, որ մանուսային զարնելով գործուած
թելերը կ'ամրացնէ, կը խտացնէ՝ ըստ
ծանրութեան եւ տեսակին. ստոր, որուն
վրայ կը փաթթուի մանուսան, զախմին
ըսուած՝ զօրաւոր դաւաղանի մը օգնու-
թեամբ. մանուսան միաչափ լայն եւ ու-
ղիւղ պահելու համար կը գործածուի դիրք
ըսուած երկու մասէ, ծայրերն ասեղով
զինուած գործին. հէմֆին թելերը երկու
երկայն ճախարակներու վրայէն անցնելով
կը հասնի մինչեւ մեծ ստորին վրայ, ուր
մագուրով հիւսուելով կը փաթթուի մեծ
ստորին վրայ: Հէմֆին թելերը կ'ամրաց-
ուին, կը զօրացուին մոմալաւ կոչուած
գի չկտորին աշխատութեան ժամանակ.
տուֆային վրայ աղւնուած է մեծ սանր
մը՝ եղէգի կարծր եւ փայլուն կեղեւներով
զինուած եւ թելերը մէջէն կ'անցնին. ասոր
կը կանխէ աղբը որ թելերը ուղիւ կը պա-
հէ մինչեւ սանրին բերանը. աղբը՝ կախ-
ուած է երկու վերին եւ ստորին ճախիկ-
ներու վրայ. վերինը՝ ուժով մաքրակի մը
վրայ հաստատուած, խսկ վարի մասը հա-
ղորդուած՝ երկու շարժիչ ոտքերուն հետ,
որոնք ալ եւ ճախ ոտքի ճնշմամբ տուֆա-
յին առջեւի հէմֆի թելերը երկու մասի
յին առջեւի հէմֆի թելերը կը բանայ, եւ
բաժնելով մագուրի անցը կը բանայ, եւ
մագուրը երբեմն ձեռքով, երբեմն քաշող
գործիքով մը այդ անցքէն կը մտնէ, կ'եւ-
լէ: Մագուրը երկայն, երկու ծայրերը
սուր, մէջտեղը լայն բացուածք մ'ունի,